

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/5**

**8 հոկտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց «Նարեկ» ստոմատոլոգիական կլինիկա» ՍՊԸ 03.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 25.08.2014 թ-ի թիվ 6100089 ստուգման ակտի դեմ:

#### **«Նարեկ» ստոմատոլոգիական կլինիկա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից 06.05.2014 թ-ին կատարվել է ստուգում, որի արդյունքում 6 (վեց) վարձու աշխատողներից 5 (հինգը) գրանցված են եղել և առկա են եղել գրավոր պայմանագրերի հրամանները: Նշված 5 (հինգ) վարձու աշխատողները գրանցված են եղել ստուգման ժամանակ, սակայն մինչև 01.08.2014 թ-ի գրանցվելը 5-7 օր անցել են փորձաշրջան առանց գրավոր պայմանագրերի, ինչի հետևանքով կազմվել է ակտը՝ առանց գրավոր պայմանագրերի կնքման աշխատողներ պահելու վերաբերյալ:

Ըստ գանգատի, ստուգման ժամանակ բոլոր աշխատակիցները, բացի Ռուզաննա Մինայանից, գրանցված են եղել: Ընդ որում, գանգատաբերը ինքն է գրել հայտարարություն, որ նշված աշխատակիցները փորձաշրջանը 5-7 օր անցել են առանց գրավոր պայմանագրերի կնքման:

Խախտումը տեղի է ունեցել օրենքի պահանջներին տեղյալ չլինելու հետևանքով, իսկ խախտումների պատճառը եղել է այն, որ աշխատողների մեծ մասը 01.03.2014 թ-ից դուրս եկել աշխատանքից, որից հետո ապրիլ-հուլիս ամիսներին ընկերությունը ունեցել է մեծ դժվարություններ: Բարեբախտաբար հուլիսից ընկերությունը համալրվել է նոր աշխատակիցներով, որոնց վերաբերյալ տվյալները գրանցված են սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերանայել արձանագրությունը և դրա հիման վրա կազմված ստուգման ակտը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 10.07.2014 թ-ի թիվ 6100089 հանձնարարագրի համաձայն «Նարեկ» ստոմատոլոգիական կլինիկա» ՍՊԸ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 25.08.2014 թ-ի թիվ 6100089 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Համադրելով 06.08.2014 թ-ի տնօրեն Հ.Գևորգյանի գրավոր հայտարարությունը, 06.08.2014 թ-ին կազմված արձանագրությունը ընկերությունում առկա գրավոր աշխատանքային պայմանագրերի հետ, հիմք է տալիս արձանագրելու, որ 2014 թ-ի հուլիս ամսին փաստացի վարձու աշխատանք կատարած թվով 6 (վեց) վարձու աշխատողների (որոնց տվյալները նշված են ստուգման ակտում) աշխատանքի ընդունումը գրավոր ձևակերպված չի եղել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացակայում են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը և (կամ) գրավոր

պայմանագրերը: Խախտվել է ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները, որի համար հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի բ) կետի պահանջները եկամտային հարկի գծով գանձման է առաջադրվել ընդամենը 900.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ստուգման ընթացքում՝ 06.08.2014 թ-ին, ««Նարեկ» ստոմատոլոգիական կլինիկա» ՍՊԸ տնօրեն Հ.Գևորգյանը տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ 06.08.2014 թ-ի դրությամբ կլինիկայում աշխատում են թվով 6 (վեց) աշխատակիցներ՝ Նելլի Օհանյանը, Արևիկ Մաթևոսյանը, Սոնա Մխիթարյանը, Աննա Ենգիբարյանը, Աննա Նալչաջյանը և Ռուզաննա Մինասյանը, որոնք գտնվում են փորձաշրջանում և նրանց հետ աշխատանքային պայմանագրեր կամ հրամաններ, կամ իրավական այլ ակտեր չեն կնքվել: Հայտարարությունը գրված է ընկերության տնօրենի ձեռքով, իր բառերով և ստորագրված է նրա կողմից:

06.08.2014 թ-ին արձանագրություն է կազմվել նաև ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանաց կողմից, որում արձանագրվել են փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնող աշխատակիցների տվյալները, ինչպես նաև նրանց փորձաշրջանում գտնվելու ժամանակահատվածը, օրվա աշխատանքային ժամերը: Նշված արձանագրությունը ստորագրված է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց և ընկերության տնօրենի կողմից:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 91-րդ հոդվածի համաձայն. «1. Աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել փորձաշրջան: Այն կարող է սահմանվել գործատուի ցանկությամբ՝ նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով, կամ աշխատանքի ընդունվողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար: Փորձաշրջանի մասին պայմանները պետք է սահմանվեն աշխատանքային պայմանագրով:

2. Փորձաշրջանի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են սույն օրենսգրքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում իրականացված ստուգման արդյունքում հիմնավորվել է ««Նարեկ» ստոմատոլոգիական կլինիկա» ՍՊԸ կողմից ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները խախտելու հանգամանքը, որի համար ստուգման ակտով կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի բ) կետով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 25.08.2014 թ-ի թիվ 6100089 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում բողոքարկել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ